Մհեր էլաւ, կինաց ուր տուն. մութ ժամանակ էր, տիւռ ծիծից.—Կնիկ, էսաց, տիւռ բաց էրա։

Կնիկ էսաց,—Վէար քի տիւռ չըմ բանայ, քիւ խիտն էլ նեա կը նստիմ, նեա կ'կանգընիմ մինչիւ քեառասուն տարի։

Էսաց.—Ա՜յ կնիկ, էդա բան էդենց մ'էնե։

—Զէ, ըսաց, որ տիւ կեացիր իս, այլազգու խիտ խառուիր իս, մինչիւ քեառասուն տարի իս պտի քեառասունք պախիմ, քիւ կուշտ չ'քինիմ։ Էնդեղ յերտիւմ կերաւ՝ «Մինչիւ քեառասուն տարի իս քիւ կուշտ պտը չ'պառկիմ»։

Էրկուսն էլ յերտըւցան, նուր տիւռ էբաց. էբաց, կեացին քեառասուն օր էնունք միամիտ իրարու կուշտ պառկան։

Քեառասուն օր էնդեղ էլաւ, տասն օր էլ էնու եալ կեալ[1]), էլաւ իցցուն օր. իցցուն օր կնկան կուշտ չ'պառկաւ. Թբխ[2]) զան իցցուն օր, իրիք տարի էլ կնկան կուշտ չ'կինաց։

Ջուհաբ իրի՝ Խմիլ խանըմին մէկ տղայ իլիր ի, անուն դրած Մսրամելիք, համա էնենց տղայ ի, աւատա, որ էնիկ չափին խաս-նը, ախշարք էնու դէմ կանգնող չ'կայ։

Էդա խօսք որ Մհեր լսաւ, էլաւ կինաց մատ ուր կնիկ, էսաց.—Կնիկ, էսաց, ասօր միր Խաւու աստղ մժվաղիր[3]) ի, իրի[4]) մէկ բան գնդընինք, մի[5]) Խաւու ճրագ տ'ընցընը. էրի մե Խաւու ճրագ մ'ընցընցու, մինք էրի կեանք մէկ տեղ, բեալքիմ Աստուած մի ճրագ կպուցու, մէկ տղայ ընը, մե Խայու ճրագ կպնը։

Էսաց.—Զէ, ես յերտիւմ իմ կերի՝ մինչիւ քեառասուն տարի մինք մէկ տեղ չ'քինինք։

դիցը, իմ աչքիր կուրացընցը, Խայու ճրագ ընցընցը, Տաճկի վառընցը»։ Մսրրը թողեց, Սասուն վերադարձաւ. Բաղդասարը և Վարդապետը մեռած էին, և այժմ Զէնով-Ցովանին, Վերգեոյին է տեսնում Սասունում։

[1]) Գնալ, գալ։ [2]) Բացի, դէպի։ [3]) Խաւարել է։ [4]) Արի, եկ։ [5]) Մեր։